մահուան անկողնոյն մէջ յիշած էր Փոտոլիոյ պայծառ արևը։

Բաց 'ի Պողոսովչէ և Միքայէլ վարդապետ, նշանաւոր են Հայոց խմբին մէջ երեք այլ երիցունք՝ Ասլանովիչ, Բարուքովիչ և Պոկտանովիչ։ Առաջին երկուքն Ս. Նիկոլայ եղբայրութեան հոգաբարձուք եղած են, և նոցա յանձնուած է՝ Կամենից մըտնելնուն պէս՝ նայիլ պատրաստել Տիրամօր հրաշագործ պատկերին՝ պաշապանի ազգիս՝ վայելուչ և պատշաճաւոր տեղի. յետինս՝ Պոկտանովիչ մանր զրած է այլազգեաց 'ի Կամենիցէ ելքը և մեծահանդէս կերպով եկեղեցեաց վերստին սրբումը։

Հայոց 'ի Կամենից վերադարձող խմբին մէջ, առանձին ջոկ մի կը կազմէին կանայք, որոց վերակացուք էին չորս մայրապետք, այլ շատ բարեպաշտ այրիք, և ազնիւ օրիորդք, 'ի թիւն որոց՝ մեզ արդէն ծանօթ Թոցիմիրպի հայազգւոյն դստրիկն՝ Մարգարիտէ, հասակակից և ընտանի Ակոբսոյ Ստեփանիկ հայ պատանւոյն։

Սա իր ազնուական ծնողացմէ ստացել էր ժառանգութիւն ոչ միայն նիւթական բարիք և ստացուածք, այլ և ազնուական սէր հայրենեաց և ազգին, այն աստիճանի՝ որ հաստատապէս միտքը դրած էր, որ եթէ օր մի արժանի լինի սուրբ պսակի, մի հայ երիտասարդի հետ, անպատճառ Կամենիցի Հայոց եկեղեցեաց միոյն մէջ կատարուի այդ խորհուրդն իւր վրայ։ Կամենից հասնելուն պէս՝ օրիորդից առաջին սրբազան գործն եղաւ՝ փնտռել գտնալ իւր սիրելի ծնողաց տան տեղը, և նստելով հայրատունկ կակղեաց հովանւոյն ներքև, ձեռն 'ի ծնօտի՝ լալ քաղցրիկ մարը անդառնալի կորուստը, որ զինքն 'ի լոյս ընծայե-